CHILDREN
OF ARMENIA
FUND

Մամուլի հաղորդագրություն
Մարտի 1, 2025

Ավելի ապահով կրթական ուղի. ՔՈԱՖ-ը գործարկում է Լոռու ՍՄԱՐԹ Կենտրոնի նոր տրանսպորտային համակարգը

ԼՈՌԻ — Մարտի 7-ին Լոռու մարզի Դեբեդ գյուղում տեղի կունենա «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի (ՔՈԱՖ) ՍՄԱՐԹ կենտրոնի տրանսպորտային համակարգի մեկնարկի պաշտոնական արարողությունը:

Հիմնադրամը, ամերիկահայ բարերար Ջեք Յուրեջյանի նվիրատվության շնորհիվ, ձեռք է բերել թվով 16 ժամանակակից ավտոբուսներ և ուղևորատար մեքենաներ, որոնք շաբաթը 7 օր անվճար կերպով սպասարկելու են մարզի 30 համայնքի շուրջ 1,500 երեխայի՝ բառացիորեն ապահովելով նրանց կրթական ուղին դեպի ՍՄԱՐԹ կենտրոն և հակառակ ուղղությամբ: Այս անվճար համակարգի ներդրումը ոչ ֆորմալ կրթության ոլորտում կարևոր քայլ է կրթության ոլորտում՝ ապահովելու երեխաների անվտանգությունը և որակյալ կրթական հնարավորություններին հասանելիությունը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տրանսպորտային համակարգի մեկնարկը նոր շունչ և մշակույթ կբերի մարզում՝ նպաստելով համայնքների ներգրավվածությանը և կրթության որակի բարձրացմանը:

Միջոցառման ընթացքում Հիմնադրամը և Իվի Մոթորս ընկերությունը կստորագրեն համագործակցության հուշագիր, ապագա ՍՄԱՐԹ կենտրոնների տրանսպորտային համակարգերի ներդրման գործում համագործակցության պատրաստակամությունը հայտնելու նպատակով:

Միջոցառմանը ներկա կլինեն ՀՀ Կառավարության ներկայացուցիչներ, Լոռու մարզպետը, «Յուրեջյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հիմնադիր, բարերար Ջեք Յուրեջյանը և ՔՈԱՖ-ի գործադիր տնօրեն Լիանա Ղալթաղչյանը:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տրանսպորտային համակարգը նոր շունչ և մշակույթ կբերի մարզում՝ լոռեցի երեխաներին և երիտասարդներին հնարավորություն ընձեռելով օգտվել 2024 թվականի արտադրության և անվտանգության առաջադեմ առանձնահատկություններ ունեցող JAC մեքենաներից: Բոլոր 16 մեքենաներն ունեն GPS հսկողության համակարգ, վարորդների վարքագծի մշտադիտարկման հնարավորություն, տեսահսկման համակարգ ինչպես վարորդների, այնպես էլ ուղևորների համար և կենսաչափական նույնականացման համալիր միջոցներ:

ՔՈԱՖ-ի՝ կրթությունն ավելի հասանելի դարձնելու առաքելության շրջանակում այս նոր համակարգը մեծ նվաճում է և նպատակ ունի նպաստել ոչ միայն երեխաների, այլև ամբողջ մարզի բարեկեցությունը:

Հրավիրում ենք լուսաբանման (Երևան-Լոռի-Երևան տեղափոխումը կապահովի մեր գրասենյակը):

ՕՐԱԿԱՐԳ

12:30-13:00 | Հյուրերի ժամանում, գրանցում ՍՄԱՐԹ կենտրոնում

13:00-13:15 | Բացման խոսք
Լիանա Ղալթաղչյան - ՔՈԱՖ գործադիր տնօրեն
Հակոբ (Ջեք) Յուրեջյան - ՔՈԱՖ բարերար
Արամ Ղազարյան - ՀՀ Լոռու մարզպետ
Արաքսիա Սվաջյան - ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ (հաստատվող)
Դավիթ Խուդաթյան - ՀՀ ՏԿԵ նախարար (հաստատվող)

13:15 - 13:30 | ՔՈԱՖ տրանսպորտային համակարգի ներկայացում
13:30 - 13:40 | ՔՈԱՖ - JAC Motors Armenia՝ պաշտոնական հուշագրի ստորագրում
13:40 - 14:10 | Շրջայց և մեքենաների ցուցադրություն
14:10-15:00 | Հյուրասիրություն Կոնցեպտ հյուրանոցում

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին
«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղական բնակչության կյանքի որակը՝ կենտրոնանալով մասնավորապես երեխաներին և երիտասարդներին վերաբերող ծրագրերի ու կարիքների վրա: ՔՈԱՖ-ի զարգացման թիրախային ոլորտներն են կրթությունը, առողջապահությունը, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացումը: ՔՈԱՖ-ը մեկնարկել է իր ծրագրերը *2004*թ.-ին՝ սկսելով մեկ գյուղից և ընդլայնվելով Հայաստանում ու Արցախում՝ *82+* համայնքներում՝ ներդնելով ավելի քան *70* մլն ԱՄՆ դոլար՝ *100,000*-ից ավել գյուղաբնակ շահառուների համար:

ՔՈԱՖ-ի հաղորդակցության բաժնի ղեկավար
Մարկ Գարգարյան
Էլ. հասցե՝ mark.gargarian@coaf.org